

# ԼՈՒՅՍ

Մշակութային և հասարակական ամսագիր

# لويس

LOUYS

*Armenian Monthly*

ISSN 1682-5446

# Ո՛Չ ԹԱԼԱՆԻՆ



# 200, Հունիս 2015 թ.

No 200, June 2015

شماره ۲۰۰ تیر ماه ۱۳۹۴

# Այս համարում

## Հայերեն բաժին

1- Հայաստան.....	1
2- Արևմտյան Հայաստան.....	6
3- Սփյուռք.....	8
4- Միջազգային.....	11
5- Հասարակական.....	12
6- Խոհեր.....	15
7- Գծանկարչություն.....	16
8- Առածանի.....	16

## Պարսկերեն բաժին

1- Հայ գրականություն.....	1-4
---------------------------	-----

← **Ճապիկի առաջին էջում՝** Ոչ թալանին  
**Վերջին էջում՝** Էդ. Բաղդասարյանի նոր գրերը  
 Համար 200, Հունիս 2015 թ.  
 No. 200, June 2015  
 ماهنامه لویس - شماره ۲۰۰ تیر ماه ۱۳۹۴

# ԼՈՒՅՍ

## Մշակութային եւ հասարակական ամսագիր

Արտոնատեր եւ գլխավոր խմբագիր՝

### Էդ. Բաղդասարյան

### Խմբագրական կազմ՝

Թամար Փանոսյան, Վանիկ Բաղդասարյան  
 Թամ Ղարախանյան, Սաթենիկ Ավետիսյան  
 Էմմա Բեգիջանյան, Հովիկ Վարդուհյան,

Փոստարկը 15875-9488 Թեհրան - Իրան

Էլեկտրոնային փոստ՝ louys\_monthly@yahoo.com  
 Ինտերնետային հասցեն՝ www.louysonline.com

## LOUYS

### Armenian Cultural and Social Monthly

License-holder and Editor-in-Chief

### Edic Baghdasarian

www.Edic-Baghdasarian.com

WEB master: Baruyr Baghdasarian

POBox 15875-9488 Tehran – Iran

E-mail : louys\_monthly@yahoo.com

Internet : www.louysonline.com

**Թերթի Գինը՝** Հատավաճառ - 5000 ռիալ  
**Բաժանորդագրություն՝**

Իրան՝ մեկ տարի՝ 60,000 ռիալ

Արտասահման՝ մեկ տարի՝ 50 ԱՄՆ դոլար

Հոդվածների հեղինակների կարծիքները կարող են  
 չհամընկնել խմբագրության տեսակետներին:  
 Արտատպության դեպքում հղումը «ԼՈՒՅՍ» - ին

Գրվագներ «Հայկական Հարցի Մանիֆեստ»-ից\*

## Ա- Ժողովուրդ

1- ՀՀ եւ ԱՀ տարածքում ապրող հայ ժողովուրդը պարտավոր է ապահովել Հայրենի Ազգային իշխանությունը: Ժողովուրդը պիտի փաստի, որ պատկանում է մի ազգի, որը ցանկանում է համաշխարհային պատմության մեջ ունենալ իր ուրույն եւ պատվավոր տեղը, ուստի այդ հանգրվանին հասնելու համար պիտի հույժ պայքար մղի թե ներքին կարգով եւ թե արտաքին ասպարեզում, նա պիտի ոտքի էլնի եւ պայքարի ներքին եւ արտաքին դավադրությունների, ապազգային ու հակահայկական տարրերի ու գործընթացների դեմ, եւ փաստի, որ միասնական ազգ է եւ օժտված է բարձր կամքով՝ կերտելու համար հայրենի երկիր, տեղական ժողովրդավարական պետություն, ազգային տնտեսություն, ուժեղ ազգային բանակ, ազգային գիտություն եւ մշակույթ, գիտակից հասարակություն:

2- Այդպիսի նպատակներին հասնելու համար, ազգասեր հայը պարտավոր է մնալ հայրենի հողի վրա եւ պայքարել բոլոր խոչընդոտների դեմ: Եթե Հայրենի հայը իր յուսավոր ապագան տեսնում է օտար ափերում, այդ հայը երբեք չի կարող ստեղծել ու պահպանել իր հայրենիքը եւ հարատևել համաշխարհային պատմության բեմահարթակում:

3- Մշակութային-հոգեբանական փոփոխություն, վնասագերծել հայրենի համայնքները անհարիր վարքերից ու ապրելակերպից:

4- Հայրենի ժողովուրդը բաց գրկով պիտի դիմավորի ներկա արտասահմանում ապրող իր ազգակիցներին, առանց շահադիտական մոլուցքի, միայն միասնական համագործակցություն մշակելու, միասնական բարեկամական ու բարիդրացիական կենցաղ վարելու նպատակով:

5- Համայնքային համագործակցության եւ հասարակական օժանդակության հիմնարկների (ինստիտուտներ) կազմակերպում Հայրենի իշխանության պարզ եւ թափանցիկ ծրագրային ու նյութական ապահովությամբ:

6- Հայրենիքի բնապահպանության ապահովման ուղղությամբ համաժողովրդական ծրագրեր իրականացնել հայրենի բոլոր տարածքներում:

7- Ժողովրդական կամավորական շարժման ենթակառույցների ստեղծում եւ տարածում ՀՀ եւ ԱՀ ամբողջ տարածքում: Այդ ենթակառույցները պիտի իրենց գործունեությունը ծավալեն ու տարածեն ՀՀ, Արցախի, Արեւմտյան Հայաստանի, Ախալքալաքի ու Սփյուռքի միջավայրերում:

-----  
 \*-www.Edic-Baghdasarian.com

## Հայաստան

### Բրազիլիայի Սենատը միաձայն ընդունել է Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձև

21:20, 29.05.2015



Բրազիլիայի Դաշնային Սենատը մայիսի 27-ին միաձայն ընդունել է Սենատի Արտաքին հարաբերությունների և ազգային պաշտպանության հանձնաժողովի նախագահ, դաշնային սենատոր Արիզոն Նունես Ֆերեյրա Ֆիլյոյի եւ դաշնային սենատոր Ժոզե Սերայի հեղինակած No 550/2015 բանաձևը, որով պաշտոնապես ճանաչվում է Հայոց ցեղասպանությունը:

ԱԳՆ մամուլի ծառայությունից հայտնում են, թե Բրազիլիայի Դաշնային Սենատի կողմից ընդունված բանաձևում ասված է. «Դաշնային Սենատը ճանաչում է Հայ ժողովրդի Ցեղասպանությունը, որի 100-րդ տարելիցը նշվեց 2015թ. ապրիլի 24-ին: Հարգանքի տուրք է մատուցում Ցեղասպանության գոհերին եւ գնահատում Բրազիլիայում բնակվող հայ փախստականների հազարավոր բրազիլահայ ժառանգների ներդրումը երկրի տնտեսական, սոցիալական եւ մշակութային ոլորտներում, եւ ընդգծում է, որ ոչ մի ցեղասպանություն չպետք է մոռացվի, որպեսզի չկրկնվի»:

*Լուրեր Հայաստանից - NEWS.am*

զանգվածային սպանությունները որակելու մեջ միջազգային դատական մարմինների առաջնային դերը եւ հիշեցրել, որ Բելգիայի Սենատը 1998թ. համապատասխան բանաձև էր ընդունել:



Վարչապետի հայտարարությունը ջերմ ծափողջույնների է արժանացել գրեթե բոլոր պատգամավորների կողմից: Ողջունելով այդ հայտարարությունը՝ «Նոր ֆլամանդական դաշինք» կուսակցության պատգամավոր Պետեր Դե Ռովերը հայտարարեց բանաձևի նախագիծ առաջարկելու մասին, որը թույլ կտա այդ հարցով առաջ շարժվել: «Դուք պատմություն եք կերտում», - նշեց «Բաց ֆլամանդական ազատականներ եւ դեմոկրատներ» դաշինքի պատգամավոր Պատրիկ Դեվալը: Ընդդիմադիր մի շարք պատգամավորներ նույնպես ողջունել են վարչապետի հայտարարությունը:

Նշենք, որ Բելգիայի վարչապետը մի քանի շաբաթ առաջ RTBF բելգիական հեռուստաընկերությանը տված հարցազրույցում հայտարարել էր իր կառավարության անունից, որ 100 տարի առաջ իրականացված հայոց ջարդերը ցեղասպանություն է եղել:

*Լուրեր Հայաստանից - NEWS.am*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱՎԱԶՍԻ ՀԱՍՏԻՆԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՇԵՏ ԿԱՂԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ**  
**DEPARTMENT OF PUBLIC RELATIONS AND MASS MEDIA OF THE PRESIDENT OF THE REPUBLIC OF ARMENIA**  
Հեռ.՝ 522.364, 525.392, Ֆաքս՝ 522.364  
Էլ. փոստ՝ [press@president.am](mailto:press@president.am) ,  
URL: <http://www.president.am>

### Բելգիայի վարչապետը խորհրդարանում ճանաչել է Հայոց ցեղասպանությունը

19.06.2015

Բելգիայի վարչապետ Շառլ Միշելը երկրի ներկայացուցիչների պալատում իր կառավարության անունից ճանաչել է Հայոց ցեղասպանությունը, հայտնում է 7sur7.be-ն:

«Ես կարծում եմ, որ 1915-1917թթ. ողբերգական դեպքերը, որոնք նախաձեռնվել էին Օսմանյան կայսրության վերջին կառավարության կողմից, պետք է որակվեն որպես ցեղասպանություն», - ասել է Շառլ Միշելը՝ պատասխանելով մեծամասնություն կազմող խմբակցության 2 պատգամավորների հարցին:

Վարչապետը նաև ընդգծել է Թուրքիայի եւ Հայաստանի միջև երկխոսության անհրաժեշտությունը: Նա նշել է նման

2015-06-27 / Նախագահը խորհրդակցություն է անցկացրել Հանրապետության տնտեսական քաղաքականության պատասխանատուների հետ

Նախագահ Սերժ Սարգսյանն այսօր խորհրդակցություն է անցկացրել Հանրապետության տնտեսական քաղաքականության պատասխանատուների հետ, որի ընթացքում շարունակվել են Հայաստանի էներգետիկ անվտանգությանը, այդ համակարգի հետագա առողջացմանը և առկա խնդիրներին լուծումներ գտնելուն ուղղված քննարկումները: Խորհրդակցության սկզբում Հանրապետության Նախագահը հանգամանորեն անդրադարձել է վերոնշյալ խնդիրներին, էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացման հիմնավորումներին, միաժամանակ իր դիրքորոշումն ու մտեցումները ներկայացրել վերջին օրերին հասարակական ակտիվիստների բողոքի ակցիայի ժամանակ բարձրացվող խնդիրների և դրանց լուծման հնարավոր տարբերակների վերաբերյալ. «Վարչապետի հետ մենք երեկ կրկին շատ երկար ենք խոսել և որոշել ենք այսօրվա մեր այս հերթական քննարկումը

ավելի տեսանելի դարձնել մարդկանց համար, լուսաբանել այն, թեպետ աշխատանքային քննարկումները սովորաբար չեն լուսաբանվում, քանի որ հասարակության համար առաջնային են արդյունքները և ոչ թե այն աշխատանքը, որ կատարվում է դրանց հասնելու համար: Այնուամենայնիվ, սա կարևոր է այսօր, որպեսզի մարդիկ տեսնեն, թե վերջին ամիսների ընթացքում այսպես ինտենսիվորեն ընթացող մեր քննարկումներն ինչ ուղղությամբ են գնում, որտեղից ենք սկսել, որտեղ ենք հիմա և ուր ենք ուզում հասնել: Անկեղծ ասած՝ այս գործընթացի մասին ես ուզում էի խոսել նաև մեր հասարակական ակտիվիստների հետ, երբ նրանք հանդիպում էին ցանկացել, և ես նրանց հրավիրել էի գրուցելու: Ինչևէ, բողոքի ակցիայի վերաբերյալ մեր մտտեցումները չեն փոխվել, թեկուզև հանդիպելու համար կարծես հնարավոր չէրավ խումբ ընտրել, ևչեն փոխվել նաև մեր հորդորները՝ խոսելու, բողոքելու, բարձրաձայնելու իրավունքի իրականացման ընթացքում զերծ մնալ անօրինա-կանություններից, և, ի վերջո, հրաժարվել մայրաքաղաքի կենտրոնը առավել ծանրաբեռնելու քայլերից:

Այո՛, ժողովրդավարության ուղին, քաղաքացիական հասարակության կայացման ուղին բարդ և խորդուբորդ է, սակայն դեպի ժողովրդավարություն տանող ուղուն մեր երկիրն այլընտրանք չունի: Այս մասին վերջին տարիների ընթացքում մենք մեկ անգամ չենք խոսել: Այս խորդուբորդ ու ոլոր ճանապարհով պիտի ընթանանք բոլորս: Այդ ճանապարհին սայթաքելով ու գլորվելով, աշխատելով ու անքուն գիշերներ անցկացնելով, իրար ցավեցնելով ու իրար սատարելով, իրար սովորեցնելով ու իրարից սովորելով, իրար չհասկանալով ու իրար լսելով, իրար չվստահելով և իրար հավատալով, երբեմն գոռալով ու վրդովվելով... իրարից նեղանալով ու իրար հարգելով... որովհետև այդ ճանապարհը պիտի անցնենք բոլորով, յուրաքանչյուրս առանձին վերցրած... որովհետև ճանապարհի հանգրվանին պիտի հասնենք բոլորով, առանց կորցնելու իրար, հեռանալով իրարից ու իրար մոտենալով, բայց միշտ իրար հետ... սակայն Աստված չանի, որ շեղվենք այդ ճանապարհից ու իրար կորցնենք այս բարդ աշխարհում... Այդ դեպքում կկորցնենք մեր ապագան, հերթական անգամ կկորցնենք «մենք»-ը ու էլի երկար հարյուրամյակներ չենք գտնի, կդառնանք ուրիշ «մենք»-ի մի «դրանք» մասնիկը, մինչև օրերից մի օր նորից բոլորով կանգնենք մեկ ուղու վրա՝

ինչպես 1988-ին:

Երբ ես ասում եմ, որ մենք պիտի սովորենք իրարից, մենք պիտի միշտ դեմքով լինենք մեկս մյուսին. ես նկատի ունեմ բոլորին,

յուրաքանչյուրին:

Ե՛վ իշխանությունը, և՛ իրավապահները, և՛ ցուցարարներն այս ուղղությամբ արել են առաջին քայլերը, և դա բնական է: Նաև ուզում եմ հստակ հայտնել իմ դիրքորոշումը այն մարդկանց, այն ուժերի հանդեպ, որոնք իրենց պատեհական շահերի համար պատրաստ են սադրել, արել իրավիճակը, անդնդել մեր վստահության դարուփոսերը, ուժեր խաղաղ հավաքները պատրաստ են մարտադաշտ դարձնել՝ մեկ ժամով այդ մարտադաշտում գորավար լինելու մարմաշով... նմանների հանդեպ իրավապահները եղել և լինելու են խիստ ու անողոք...

Յավոք, շատ հարցերի պատասխանները հնարավոր չէ տալ այնքան արագ և այնպես, ինչպես կցանկանայինք բոլորս: Ե՛վ հաճախ, խնդիրների լուծման արագության և մեր ակնկալիքների դիմաց վճարում են իրավապահները, մինչդեռ այդ խնդիրների լուծման բեռը նրանցը չէ: Հաճախ հենց նրանք են հարկադրված կատարել ամենաձանր աշխատանքը, և, ցավոք, հաճախ, հասարակության անվտանգությունն ապահովող, իր պարտականությունը

կատարող ուստիկանը նույնպես դառնում է ամենաթողության

զոն:

Այս առումով պետք է շեշտեմ նաև լրագրողների ու լրատվամիջոցների դերը. շատ կարևոր է առավելապես բռնության և քառսի դրամատիկ պատկերներ լսարանին արհեստականորեն հրամցնելու փոխարեն, անկառավարելի մի քանի արկածախնդրի վրա կենտրոնանալու փոխարեն, արժանին մատուցել այն բազմաթիվ խաղաղ ցուցարարներին, որոնք էլ հենց խաղաղ հավաքների ոգին են, կամքն են ու միտքը: Բռնության կոչով մեկ պատկերը կարող է կրկին ու կրկին հայտնվել էկրաններին և սոցիալական ցանցերում, իսկ հազարավոր խաղաղ ցուցարարները մնան սովերում: Բարեբախտաբար պիտի նշեմ, որ այս օրերին մեր լրատվամիջոցների հերոսներն ավելի ու ավելի հաճախակի եղել են հենց խաղաղ ցուցարարները և հենց հայկական լրատվամիջոցների ջանքերով աշխարհը ստանում է հավասարակշռված տեղեկատվություն իրադարձությունների վերաբերյալ, իսկ մեր պետությունը կարողանում է հակազդել հակահայկական

ապատեղեկատվությանը:

Ուզում եմ արձանագրել մի փաստ ևս. ցուցարարները և իրավապահներն այս մի քանի օրերի ընթացքում կարողացան ավելի մեծ փոխադարձ վստահություն ձևավորել, քան հնարավոր էր մի քանի տասնամյակի ընթացքում: Ես, անշուշտ, հետևել եմ վերջին զարգացումներին և ուզում եմ արձանագրել, որ հունիսի վերջին շաբաթվա ընթացքում Հայաստանը դարձավ մի մեծ ու արդյունավետ ուսումնական կենտրոն՝ համալսարան, որտեղ մեր քաղաքացիներն ու իրավապահները, լրագրողներն ու պատգամավորները, մտավորականներն ու օտարերկրացիները սովորեցնում էին իրար ու սովորում էին իրարից, լսում էին իրար, անգամ խնդրի հանդեպ անհանդուրժողականությամբ ափեսափ լցված հանդուրժում էին միմյանց, լսում էին այնպես, ինչպես աշխարհի քիչ անկյուններում իրար լսել գիտեն:

Այս օրերին մենք հիացնում ենք բոլորին մեր պատասխանատվությամբ և ակտիվությամբ: Ակնկալում եմ, որ երիտասարդները նույնպիսի խոհեմություն և իմաստություն կցուցաբերեն նաև մեր վաղվա օրվա հանդեպ, իսկ մեր վաղվա օրվա ապահովությունը պահանջում է պահպանել այն կենսական համակարգերը, որոնք սնում են մեր երկրի տնտեսությունն ու յուրաքանչյուրիս բնտանիքը: Մենք չենք կարող կտրել մեր երկրի կենսական օրգանները սնող զարկերակներն ու երակները միայն այն բանի համար, որ դրանք ախտահարված են հիվանդությամբ: Մենք չենք կարող մեր երկիրը զրկել արյունից ու թթվածնից՝ կենտրոնանալով միայն նրա էներգետիկ զարկերակներն ախտահարած խնդիրների պատճառների վրա: Առաջնահերթ կերպով մենք պիտի լուծումներ փնտրենք այդ կենսական համակարգը փրկելու համար՝ զուգահեռաբար բուժելով այն, վերակառուցելով այն, դարձնելով այն անխոցելի ապագայում, և այս նախաձեռնության մեջ մեզ համար դժվար օրերում ու սոցիալական բարդ իրավիճակում մենք միայնակ չենք: Վերջին տարիների ինտեգրացիոն գործընթացները նոր հնարավորություններ են բացել մեր երկրի համար: Վարչապետի գլխավորությամբ մեր պատասխանատուները ակտիվ աշխատում են Եվրասիական տնտեսական միության մասնագիտացված կառույցների հետ, որպեսզի նոր-նոր թափ հավաքող այս ինստիտուտները իրենց ակտիվ դերակատարմամբ նոր լուծումներ բերեն Հայաստանի էներգետիկ համակարգի և սակագնի օբյեկտիվ բարձրացման սոցիալական բեռը չեզոքացնելու և ժողովրդի ուսերից վերցնելու համար: Սա

գործընթաց է, որն ակտիվորեն իրականացվում է, և մեր պատասխանատուները հետևողականորեն աշխատում են մեր գործընկերների հետ: Հավատում եմ, որ լուծումները չեն ուշանա:

Մյուս կողմից, մենք ունենք նաև մեր քայլերի մշակված քարտեզը:

Երեկ, Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի ռուսական կողմի նախագահ, ՌԴ տրանսպորտի նախարար Մաքսիմ Սոկոլովի գլխավորած պատվիրակության հետ հանդիպման ժամանակ մենք խոսել ենք այն մասին, որ ճիշտ կլիներ միջկառավարական հանձնաժողովի կողմից դիտարկվել «ԻՆՏԵՐ ՌՍՕ ԵԷՍ» ընկերության դուստր ձեռնարկության՝ Հայաստանի բաշխիչ ցանցերի գործունեության մանրագին աուդիտի անցկացման հնարավորությունը նրանց ամբողջ գործունեության ընթացքի համար՝ փորձագիտական հանրության և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մասնակցությամբ: Այո, խնդիրները, որ կարող են լինել դուստր ձեռնարկությունում, մեր պետական մարմինների աշխատանքով առավելագույնս դուրս են սակագնի հաշվարկից, այնուամենայնիվ, այդ ընկերության հնարավոր խնդիրները մեզ հետաքրքրում են, քանի որ մենք, որպես պետություն, շահութահարկի մասով հետաքրքրված ենք ընկերության շահույթի մեծությամբ: Այս առումով աշխատանքը կարևոր է ոչ միայն ռուսական կողմի համար, այլև Հայաստանի համար: Բայց սա խնդրի մի կողմն է միայն և չի առնչվում սակագնին:

Հիմա սակագնի մասով: Ես խորապես համոզված եմ, որ սակագնի բարձրացումն արդարացված է:

Նաև համոզված եմ, որ եթե սակագինը չբարձրացնենք, ապա էներգետիկ համակարգը դոմինոյի էֆեկտով փլուզման վտանգի առաջ կկանգնի: Ի վերջո, մեր բնակչության ավելի տարիքով հատվածը երբեք չի մոռանա 1988 թվականին ատոմակայանի փակման հետևանքները. այն ժամանակ էլ գրեթե բոլորը ոգևորված էին այդ չակերտավոր չարիքից ազատվելու հարցում, բայց հետո պարզվեց, որ իրական չարիքը հենց ատոմակայանը փակելն էր, ինչը մինչև այսօր իր բացասական ազդեցությունն է թողնում: Նույնը Նաիրիտի հետ կապված. փակելով այն, դուրս դնելով բնականոն զարգացման ցիկլից՝ հասանք մի իրականության, երբ պետությունը մինչև այսօր ստիպված ու պարտադրված է հավելյալ գումարներ ծախսել այս ուղղությամբ:

Կարող եմ բերել տասնյակ այսպիսի օրինակներ: Սակագնի մասին շատ ենք խոսել: Ներկայացվել են բարձրացման օբյեկտիվ 3 հիմքերը: Բերվել են հիմնավորումներ, սակայն ակնհայտ է, որ կա վստահության պակաս: Համարում եմ, որ կասկածը, անվստահությունը մեր առաջին թշնամին են նման հարցերում: Առաջին հերթին հենց դա պետք է վերացնենք:

Առաջարկում եմ՝ ընտրել աշխարհում էներգետիկայի ոլորտում մեծ փորձ ունեցող և մեծ հեղինակություն վայելող որևէ միջազգային խորհրդատվական ընկերություն, եթե հարկ կա, այդ ընտրության ժամանակ ներգրավվենք նաև բողոքի ակցիայի ակտիվ տղաներից մի քանիսին, և այդ ընկերությանը հանձնարարենք աուդիտորական ընկերության ներգրավմամբ պատասխանել հետևյալ հարցերին՝

- ինչպե՞սով էր հիմնավորված սակագնի բարձրացումը, և
- սակագնի չբարձրացման դեպքում ինչպիսի՞ վտանգներ են սպառնում էներգետիկ համակարգին:

Ինչպես նշեցի, համոզված եմ՝ սակագնի բարձրացումը չեղյալ հայտարարելը ծայրահեղ վտանգավոր է: Ուստի, մինչև եզրակացության կազմումը այդ ընկերության կողմից կառավարությունը իր վրա կվերցնի սակագնի բարձրացման ամբողջ բեռը: Անշուշտ, մենք ընթացող ծրագրերին կամ սոցիալական ծախսերին չենք դիպչի, այլ գումարներ կգտնենք անվտանգության հետագա ամրապնդման համար նախատեսվող միջոցներից: Իհարկե, մեր անվտանգության խնդիրները հեռու են լուծված լինելուց, և սա մեզմ առած, բայց կասկածամտության ու անվստահության այն մթնոլորտը, որ այսօր կա, ես նույնպես անվտանգության խնդիր եմ համարում և շատ կարևոր խնդիր: Դա լուծել է պետք:

Իսկ եթե եզրակացությունը հաստատի սակագնի ավելացման հիմնավորվածությունը, ապա այդ պահից սպառողներն առանց որևէ կասկածի հիմքերի կկսեն վճարել այդ սակագնով: Եթե եզրակացությունը հաստատի սակագնի ավելացման անհիմն լինելը, ապա կառավարությունը քայլեր կձեռնարկի Բաշխիչ ցանցերից ավել վճարված գումարը հետ գանձելու և թերացած պաշտոնատար անձանց պատասխանատվության կանչելու համար: Այս պայմաններում դեռևս մի քանի ամիս առաջ կառավարության կողմից սկսված աշխատանքը Բաշխիչ էլեկտրական ցանցերի սեփականատիրոջ փոփոխության առումով հաստատուն համոզմունք կդառնա՝ չբացառելով նաև այն պետությանը վերադարձնելու և մրցակցային կառավարման հանձնելու տարբերակը: Մա այն մասով, թե ինչ ուղղություններով ենք մենք աշխատում այս օրերին և աշխատում ենք վաղուց: Իհարկե, բազմաթիվ այլ ուղղություններով էլ ենք առաջ գնացել և լրջորեն քննարկել: Խնդիրը պետք է լուծել, և դրա համար ժամանակ կա:

Այս պահին որպես աշխատանքային քննարկումների տրամաբանության մասին իրազեկում, այսքանն էի ցանկանում ասել: Վերջում ավելացնեմ հետևյալը. Թող որևէ մեկի մտքով չանցնի, թե սակագնի բարձրացման խնդիրների հետ կապված մեր երկրում կան հակադիր կողմեր, թող որևէ մեկի մտքով չանցնի, թե կան մերոնք և ձերոնք. դա անհեթեթ է այնքան, որքան վտանգավոր է: Ես ուզում եմ նաև դիմել բողոքի ձայն բարձրացրած մեր երիտասարդներին. սիրելիներս, մի՛ վախեցեք նոր պատասխանատվություն վերցնել և քայլերի մշակման իրական գործընթացին մասնակից դառնալ՝ դրանով իսկ նվազեցնելով կասկածամտությունը մեր հասարակության մեջ: Այսպիսի քննարկումներ մենք ունեցել ենք տասնյակներով, դրանց ձեզ մասնակից դարձնելուն երբեք դեմ չենք: Գործընթացի վերջում բոլորը բավարարված ու հասկացված են լինելու: Իհարկե, կլինեն մարդիկ որոնք որևէ լուծում չեն ընդունի, որոնց լուծումների գոյությունը ձեռք չի տալիս ու ցանկացած որոշման դեպքում անվանարկելու են, բայց այսօրվա խոսքս նրանց չի վերաբերվում, այլ այն ակտիվ մեծամասնությանը, որոնք խնդրի լուծում են ուզում և չեն օգտագործվի քաղաքական նպատակներով:

Ուրեմն եկե՛ք լուծենք խնդիրը և եկե՛ք այնպես անենք, որ ընթացքում որևէ փորձություն չբերենք մեր գլխին: Չափն անցնել որևէ դեպքում չի կարելի. ոստիկանությունը ի վիճակի է լուծել ցանկացած խնդիր, բայց դա մեր նպատակը չէ: Եվ Աստծո սիրուն, հերի՛ք է կաթվածահար անեք քաղաքի կենտրոնը, պատասխանատվության բեռը բոլորիս ուսերին գնալով միայն ավելանալու է, անցե՛ք ավելի հանգիստ միջոցների, ազատե՛ք Բաղրամյան պողոտան և օգնե՛ք լուծումների փուլում և դրանց հանդեպ

վատահույսան ամրապնդման հարցերում: Այն էներգետիկ համակարգը, որ այսօր մենք փորձում ենք զարգացման հիմքերի վրա դնել, բոլորիս համար է, նախ և առաջ ձեր սերնդի համար: Լսե՛ք իմ բարեկամական հորդորը, անպայման լսեք: Մի քանի օրից ցանկանում եմ մի քանիսիդ հրավիրել գրուցելու. հույս ունեմ, որ ավելի հեշտ իրականություն կդարձնենք այդ հանդիպումը: Գործ շատ կա անելու, և միասին պիտի ավարտենք այս դժվարին պրոցեսը:

Այսքանն էի ուզում ասել իբրև մեր այսօրվա խորհրդակցության սկիզբ: Իհարկե, խոսքն ավելի՛ շատ խորհրդակցության մասնակիցներին չէր ուղղված: Այժմ անցնենք մեր բուն աշխատանքին և շարունակենք քննարկել հարցերը, այդ թվում՝ էներգետիկ համակարգի զարգացման ռազմավարական ծրագրի դրույթները, այն ծրագրի, որ նախատեսված է իրականացնել 2016-2036 թթ.», - խորհրդակցության ժամանակ ասել է Նախագահ Սերժ Սարգսյանը:

## Մահացել է Հայ կաթողիկե եկեղեցու կաթողիկոս պատրիարքը

25.06.2015



75 տարեկան հասակում մահացել է Հայ կաթողիկե եկեղեցու կաթողիկոս պատրիարք Տեր Ներսես Պետրոս ԺԹ կաթողիկոսը: Նա մահացել է այսօր՝ հունիսի 25-ի առավոտյան, Բեյրութում, սրտի կաթվածից:

Պատրիարքը ծնվել է Կահիրեում, սովորել է Հռոմում, հոգեւորական է ձեռնադրվել 1965-ին, իսկ, 1999-ի հոկտեմբեր 7-ին ձեռնադրվել է Հայ կաթողիկե եկեղեցու կաթողիկոս պատրիարք: Ներսես Պետրոս ԺԹ Թարմունիի առաջարկով եւ նախաձեռնությամբ է այս տարի ապրիլի 12-ին Վատիկանում Հռոմի պապ Ֆրանցիսկոսը Վատիկանի Մուրբ Պետրոսի տաճարում պատարագ մատուցել՝ նվիրված Հայոց Տեղապանության 100-րդ տարելիցին:

Հայ Կաթողիկե եկեղեցու կաթողիկոս պատրիարք Ներսես Պետրոս ԺԹ Թարմունին մեծ աշխատանք է կատարել նաեւ Գրիգոր Նարեկացուն եկեղեցու տիեզերական ուսուցիչների շարքում դասելու ուղղությամբ:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

## Իրան-Հայաստան երկաթուղու նախապատրաստումն արդեն ընթանում է. փոխնախարար

Իրան-Հայաստան երկաթուղու նախապատրաստումն արդեն ընթանում է: Այս մասին հունիսի 15-ին Հայաստանի

խորհրդարանում հայտարարեց Հայաստանի Հանրապետության միջազգային տնտեսական ինտեգրման եւ բարեփոխումների փոխնախարար Սուրեն Կարայանը:

Նա նշեց, որ շինարարության որոշումը պետք է Հայաստանը կայացնի: Ապագա երկաթուղու շահութաբերությանը կարող է նպաստել ԵՏՄ անդամ մյուս երկրների՝ Իրանի հետ համագործակցելու ձգտումը: «Ընդհանուր առմամբ ԵՏՄ մեր գործընկերները պատրաստ են առաջնորդվել նման պլաններով: Այդ ամենը կարող է ապագա երկաթուղին առավել կենսունակ դարձնել», - նշեց Կարայանը:



Իրան-Հայաստան երկաթուղու շինարարության արժեքը կարող է կազմել 3.2 մլրդ դոլար: Դրա 60 տոկոսը պատրաստ է ներդնել Դուբայում գտնվող «Ռասիա ՖՁԷ» ընկերությունը: Ակնկալվում է, որ շինարարությունը կշարունակվի 6 տարի:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

## Արցախի ՊՆ նախարարը պաշտոն ստացավ Երեւանում

15.06.2015



Նախագահ Սերժ Սարգսյանն այսօր հրամանագիր է ստորագրել գեներալ-լեյտենանտ Լյովա Մնացականյանին Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի պետի տեղակալի պաշտոնից ազատելու մասին:

Հանրապետության նախագահի մեկ այլ հրամանագրով, գեներալ-լեյտենանտ Մովսես Հակոբյանը նշանակվել է Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի պետի տեղակալ:

Նշենք, որ մամուլում ավելի վաղ գրվել էր, որ Լյովա Մնացականյանը նշանակվելու է Արցախի պաշտպանության նախարար, իսկ նրա փոխարեն նշանակվելու է Մովսես Հակոբյանը:

Վերջինս 2017թ. Յուրի Խաչատուրովից հետո դառնալու է գլխավոր շտաբի պետը:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

## Հայաստանի դեսպանը հանդիպեց Իրանի նավթի նախարարին

15.06.2015



Հունիսի 14-ին Իրանում ՀՀ դեսպան Արտաշես Թումանյանը հանդիպում ունեցավ Իրանի նավթի նախարար Բիժան Նամդար Չանգանեի հետ:

Ողջունելով դեսպան Թումանյանին՝ Իրանի նավթի նախարարը գոհունակություն հայտնեց հայ-իրանական երկկողմ փոխշահավետ համագործակցության առնչությամբ: Այս համատեքստում առանձնահատուկ ընդգծվեց էներգետիկ ոլորտում ծավալված համագործակցությունը: Նախարարը նաեւ հավելեց, որ հայ համայնքը զգալի ներդրում է ունեցել երկրի տնտեսության տարբեր ոլորտների զարգացման գործում:

Դեսպան Թումանյանն իր հերթին խոսեց հայ-իրանական հարաբերությունների բարձր մակարդակի եւ տնտեսական հարաբերությունների աշխուժացման անհրաժեշտության մասին: Քննարկվեց երկկողմ տնտեսական ծրագրերի իրականացման ընթացքը, եւ ընդգծվեց էներգետիկ ոլորտում արդեն ձեւավորված արդյունավետ համագործակցության փաստը: Արտաշես Թումանյանը ներկայացրեց հայ-իրանական տնտեսական հարաբերությունների զարգացման հեռանկարներին նվիրված մի շարք հարցեր:

Բիժան Չանգանեն իր պատրաստակամությունը հայտնեց՝ նպաստել Հայաստանի հետ համագործակցության ընդլայնմանը եւ հաջողություն մատչեց դեսպան Թումանյանին իր դիվանագիտական առաքելության ընթացքում:

*Լուրեր Հայաստանից - NEWS.am*

## Չինաստանի ԱԳՆ-ն հատուկ բանագնաց է ուղարկել Երեւան

15.06.2015

Հունիսի 15-ին Հայաստանի արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանն ընդունեց Չինաստանի արտգործնախարարության հատուկ բանագնաց, Հայաստանում Չինաստանի առաջին դեսպան Ճաո Միդին:

Ողջունելով հյուրին՝ նախարար Նալբանդյանը խորհրդանշական համարեց Հայաստանում Չինաստանի առաջին դեսպանի այցը Հայաստան՝ որպես Չինաստանի ԱԳՆ հատուկ բանագնաց՝ կարեւորելով այն հանգամանքը, որ դեսպանը առ այսօր իր նպաստն է բերում հայ-չինական բարեկամության ամրապնդմանը:

Շնորհակալություն հայտնելով ընդունելության համար՝ դեսպան Միդին Էդվարդ Նալբանդյանին փոխանցեց

Չինաստանի արտգործնախարար Վան Իի ողջույնները եւ նշեց, որ ուրախ է կրկին գտնվել Հայաստանում՝ որպես Չինաստանի ԱԳՆ հատուկ բանագնաց:



Չրուցակիցները, բարձր գնահատելով Հայաստանի եւ Չինաստանի միջեւ դինամիկ զարգացող հարաբերությունները, նշեցին, որ ս.թ. մարտին ՀՀ Նախագահի՝ Չինաստան կատարած պետական այցելությունը նոր լիցք հաղորդեց բազմաոլորտ հայ-չինական համագործակցությանը:

Հայաստանի արտգործնախարարը շնորհակալություն հայտնեց անկախությունից ի վեր Հայաստանին Չինաստանի կողմից տրամադրվող շարունակական աջակցության համար:

Չրուցակիցները մտքեր փոխանակեցին միջազգային կազմակերպություններում փոխգործակցության շուրջ, անդրադարձան ՄԱԿ-ի բարեփոխումների գործընթացին:

Նախարար Նալբանդյանը ներկայացրեց դարաբաղյան հիմնահարցի կարգավորմանն ուղղված ջանքերը: Այս համատեքստում դեսպան Միդին վերահաստատեց Չինաստանի աջակցությունը խնդրի խաղաղ կարգավորմանն ուղղված ջանքերին:

[Լուրեր Հայաստանից - NEWS.am](http://www.news.am)

## Քաղրամյան պողոտայի ակցիան լուսաբանում են միջազգային լրատվամիջոցները

24.06.2015



Քաղրամյան պողոտայում էլեկտրաէներգիայի թանկացման դեմ բողոքի ակցիան լուսաբանելու համար Երեւան են ժամանել միջազգային ՉԼՄ-ների ներկայացուցիչներ՝ Ռուսաստանից, ԱՄՆ-ից, Վրաստանից եւ Ուկրաինայից նկարահանող խմբեր:

Այստեղ են նաև միջազգային ՉԼՄ-ների հայաստանյան թղթակիցները:

Միջազգային լրավամիջոցները հարցազրույցներ են անում պատգամավորների, ցուցարարների, հայտնի մշակույթի գործիչների և ոստիկանների հետ:

Նշենք, որ արդեն 14 ժամից ավելի ցուցարարները չեն հեռանում Բաղրամյան պողոտայից:

Չորս օր տեւած նստացույցից հետո հունիսի 22-ին ավարտվել էր «Ոչ թալանին» նախաձեռնության՝ իշխանություններին տված վերջնաժամկետը, և ցուցարարները մեծ բազմությամբ շարժվել էին դեպի Բաղրամյան պողոտա: Ոստիկաններ փակել էին պողոտան, ինչից հետո նստացույց էր սկսվել: Հունիսի 23-ին վաղ առավոտյան ոստիկանները ջրցան մեքենայի օգնությամբ ցրել են ցույցը, ապա բերման ենթարկել ակտիվիստների և լրագրողների: Նույն օրը երեկոյան ժամը 20:00-ի մոտ ցուցարարները կրկին Ազատության հրապարակից երթով շարժվեցին դեպի Բաղրամյան 26: Ոստիկանները կրկին փակեցին նրանց ճանապարհը: Կեսգիշերից հետո ցուցարարներին աջակցություն հայտնելու և նրանց ու ոստիկանների միջև կենդանի պատ կազմելու նպատակով բաղրամյան պողոտա եկան պատգամավորներն ու շոու բիզնեսի աստղերը: Նրանց մի մասը լուսացրել է Բաղրամյան պողոտայում:

Հիշեցնենք, որ չնայած էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացման դեմ ուղղված բազմաթիվ բողոք-ակցիաներին հունիսի 17-ին, ՀՕԿՀ հանձնաժողովի նիստում հաստատվել է էլեկտրաէներգիայի նոր սակագինը: էլեկտրաէներգիան թանկացել է 6.93 դրամով մեկ կՎտ/ժ-ի դիմաց 41.85 դրամից դառնալով 48.78 դրամ: «Հայաստանի էլեկտրական ցանցեր» (ՀԷՑ) ընկերությունը առաջարկել էր էլեկտրաէներգիայի մեկ կիլովատտ/ժամը թանկացնել 17 դրամով:

*Լուրեր Հայաստանից - NEWS.am*

## Figaro. Երեւանի խեղդող շոգը չի կանգնեցնում ցուցարարներին

24.06.2015



Երեւանում ցուցարարներին չի կանգնեցնում նույն խեղդող շոգը: Այս մասին գրում է ֆրանսիական Figaro պարբերականը:

Էլեկտրաէներգիայի սակագնի թանկացման դեմ բողոքի ակցիան թերթը կոչել է Հայաստանում վերջին տարիների ամենախոշոր հակակառավարական ցույցը: Պարբերականի հրապարակման մեջ նշվում է. «Բողոքի շարժումն ամբողջ երկրում տարածվում է «Ոչ թալանին» խմբի ջանքերով: Նրանց Facebook-ի էջում կարելի է գտնել կառավարությանն ուղղված կոչը. «Մենք ենք երկրի տերերը: Չենք հանդուրժի

էլեկտրաէներգիայի սակագնի աճը և թույլ չենք տա (կառավարությանը - Figaro) թալանել մեր ժողովրդին»:

Ներկա են նաև ընդդիմադիր ուժերը, այդ թվում՝ Հայ ազգային կոնգրեսը: Իսկ այս գիշեր հայտնի անձիք՝ ընդդիմադիր պատգամավորներ, դերասաններ և նույնիսկ կառավարության անդամներ (կրթության նախարարը) կենդանի պատ կազմեցին ցուցարարների և ոստիկանների միջև»:

Այնուհետև Figaro-ն նշում է, որ թանկացման պատճառներից մեկն էլ ռուսական ռուբլուն հետեւած ազգային արժույթի անկումն է: Իսկ դա նշանակում է, որ Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի անդամակցությունը կուժեղացնի Արեւմուտքի կողմից Ռուսաստանի դեմ սահմանված պատժամիջոցների հետեւանքների հանդեպ խոցելիությունը: Այնուհետև հոդվածում նշվում է.

«Հայկական արտահանման 23%-ը բաժին է հասնում Ռուսաստանին, և հզոր հարեւանի մոտ առկա տնտեսական ճգնաժամն ազդել է հայկական տնտեսության և արժույթի վրա: Հենց դա էլ ազդեց սակագնի բարձրացման մասին էլեկտրացանցի պահանջի վրա: Անդամակցելով ԵՏՄ-ին՝ Հայաստանը պետք է դիմակայի Ռուսաստանի դեմ Եվրոպայի և ԱՄՆ-ի սահմանած պատժամիջոցներին, որոնք երկարացվելու են մինչև 2016 թվականի հունվարը»:

*Լուրեր Հայաստանից - NEWS.am*

## Արևմտյան Հայաստան

### Պայքարելու են ժխտողական քաղաքականության դեմ ու հայերի խնդիրների լուծման համար. Կարո Փայլան

15:52, 10.06.2015



Հունիսի 7-ին Թուրքիայում անցկացվեցին 25-րդ գումարման խորհրդարանի ընտրությունները: Տարբեր կուսակցությունների կողմից առաջադրված ազգությամբ հայ 5 թեկնածուներից 3-ը հաղթահարեցին անցողիկ շեղը: Նրանցից մեկը և թերևս հայկական համայնքի կողմից ամենասիրված թեկնածուն ընդդիմադիր «Ժողովուրդների դեմոկրատական» (HDP) քրդամետ կուսակցության կողմից առաջադրված Կարո Փայլանն է:

Ermenihaber.am-ի թղթակցի հետ զրույցում Փայլանը, ընտրվելուց հետո առաջին անգամ խոսելով հայաստանյան



լսարանի համար, պատմեց իր նախկին գործունեության, ապագա ծրագրերի մասին ու ներկայացրեց Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման իր բանաձևը:

Հարցազրույցը ներկայացված է ստորև.

## **Նախկինում ավելի շատ կրթական հարցերով էիք զբաղվում, քաղաքականությամբ հետաքրքրված չէիք , ինչպե՞ս եղավ թեկնածության առաջադրելը :**

Իրականում Թուրքիայում «հայ են» ասելն արդեն իսկ քաղաքական մի բան է: Եթե հայերով հետաքրքրված ես, սեփական ինքնությամբ հետաքրքրված ես, նշանակում է քաղաքականությամբ էլ ես հետաքրքրված: Երիտասարդ տարիներից սկսած հայկական կազմակերպություններում եմ աշխատել, այնուհետև հայկական դպրոցի տնօրեն եմ եղել: Եվ բոլոր աշխատանքներս հայկական համայնքի խնդիրներով են եղել: Բացի այդ Հրանտ Դինքի սպանությունը մեզ շատ քաղաքականացրեց: Մինչև այդ ուղերգական իրադարձությունը ես դպրոցի տնօրեն էի, և միաժամանակ՝ գործարար: Սակայն Դինքի սպանության օրն ինձ համար դարձավ բեկումնային օր, երբ հասկացա, որ այս երկրում փող վաստակելս չէ, որ կարևոր է: Հասկացա, որ ինչ-որ բան պետք է փոխել և կյանքս նվիրեցի Հրանտ Դինքի սպանության մեղավորներին գտնելու պայքարին ու միևնույն ժամանակ հայ աշակերտների խնդիրների բարձրացմանը: Այնուհետև 2011 թվականին սոցակտիվիստական խմբերի հետ հիմնեցիքը Ժողովուրդների դեմոկրատական Կոնգրեսը: Իսկ 2013-ին մեր կուսակցությունը հիմնեցինք:

## **Եթե այլ կուսակցությունից ստանայիք առաջադրվելու առաջարկ, կընդունե՞իք:**

Ոչ , չէի ընդունի: Ինձ համար կարևոր է կյանքի բոլոր բնագավառներում հավասարությունը: Իսկ մյուս կուսակցությունները ժողովրդավարությանը վերաբերող հարցերում «բայց»-եր ունեն: Նրանք չեն հավատում հավասարությանը և իրենց կուսակցություններում գերիշխողը մեկ ինքնություն է: Իսկ մեր կուսակցությունում հավասարություն կա՝ առանց «բայցեր»-ի: Իմ կուսակցության մեջ ինձ որպես հայ օտարացված չեմ զգում:

## **Ինչպես գիտեք, ԱԶԿ-ում և ԺՀԿ-ում էլ հայ պատգամավորներ կան: Պատգամավորական գործունեությանդ մեջ պատրա՞ստ եք նրանց հետ համագործակցել, թեկուզ հայերին վերաբերող հարցերում:**

Մեխինա շատ մոտ ընկերս է: (Մեխինա Օզուգուն Դողանը «Ժողովրդահանրապետական կուսակցությունից» ընտրված հայ պատգամավոր է- Ա. Ի.) Կարծում եմ, որ նրա հետ անցնելիք ճանապարհ ունենք: Իսկ Մարգարի (Մարգար Եսայանը իշխանական «Արդարություն և զարգացում կուսակցությունից» ընտրված հայ պատգամավոր է- Ա.Ի.) հետ ժամանակին գաղափարակիցներ ենք եղել, նույնիսկ Էրդողանի դեմ համատեղ հռչակագրեր ենք հեղինակել: Սակայն Մարգարի վերջին 3 տարվա գործունեությանը եթե նայենք, իշխանություններին գովաբանող լեզվով է խոսում: Իսկ դրան ես երբեք չեմ կարող մասնակցել: Եթե նա կարողանա ձերբազատվել այդ գործունեությունից, կհամագործակցենք, իսկ եթե չէ, Մարգարի հայ լինելը ոչ մի նշանակություն չունի: Ինձ համար ազգությամբ ոչ հայ ուրիշ մարդիկ Մարգարից շատ ավելի կարևոր կարող են լինեն: Օրինակ՝ ունեմ մեծ թվով կուսակցիներ, որոնք հայեր չեն, բայց հայերին վերաբերող հարցերում Մարգարից 1000 անգամ ավելի սրտացավ են:

## **Ի՞նչ է նշանակում Ձեզ համար լինել հայ պատգամավոր Թուրքիայի խորհրդարանում: Հայկական խնդիրներով զբաղվելու պատասխանատվություն զգու՞մ եք:**

Անկասկած զգում եմ: Մի շարք խնդիրներ ունենք: Անցյալի հետ առերեսվելու, Հրանտի, Սևակի, ցեղասպանության խնդիրներ ունենք: Մշակութային մեծ կորուստ ունենք, որն առ այսօր փոխհատուցված չէ: Սակայն ես այսպես եմ մտածում. եթե այս բոլոր խնդիրների լուծման համար մենք հայերս միայնակ պայքարենք, հաջողության չենք հասնի: Մեր կուսակցության սկզբունքներից է, որ այս խնդիրների համար պայքարենք այլ ազգերի հետ միասնաբար: Բայց, բնականաբար, ես անձնապես իմ պայքարը կտանեմ: Ժխտողական քաղաքականության դեմ պայքարողներից մեկը կլինեմ, մեր համայնքին վերաբերող խնդիրների լուծման համար կպայքարեմ, անկախ այն բանից դրանք կլինեն պարտիաբարանի, դպրոցների թե հիմնադրամների խնդիրները:

## **Թվարկա՞ծ խնդիրները վերաբերում են հայ համայնքին, իսկ Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման հարցում պատրաստվո՞ւմ եք ինչ-որ քայլեր անել:**

Իհարկե: Բայց այս հարցում ինձ համար կարևոր մի բան կա: Հայոց ցեղասպանությունը այստեղ է եղել, բայց հաճախ դիտվում է Հայաստան-Թուրքիա հարաբերությունների համատեքստում: Ցեղասպանությունը այստեղ է տեղի ունեցել ու առերեսում էլ այստեղ պետք է լինի: Հայաստան-Թուրքիա հարաբերությունները կազմում են այս հարցի ընդամենը մի մաս, բայց ոչ՝ հիմքը: Ես կարծում եմ, որ քանի դեռ հանրության մեջ առերեսումը չի հասունացել, արձանագրություններն իմաստ ունենալ չեն կարող:

## **Այսինքն հարաբերությունների կարգավորումը կապում եք ցեղասպանության ճանաչման հե՞տ: Ինչպես գիտեք, ՀՀ նախագահն առաջարկել էր առանց նախապայմանների բացել սահմանները:**

Այո, գիտեմ ու այդ տեսակետը չեմ ընդունում: Նախևառաջ պետք է Թուրքիայում ցեղասպանության հանցանքը գիտակցվի, հայկական ինքնությունը կարգավորվի և Հայաստանի նկատմամբ թշնամանքը վերանա: Անշուշտ, ես հարցում եմ Հայաստանի և սփյուռքի մղած պայքարը: Բայց կոչ եմ հղում բոլորին, բոլոր հայկական կուսակցություններին, այդ թվում՝ դաշնակցականներին, եկեք այդ պայքարը այստեղ մղենք: Թուրքիա եկած ամեն մի հայ ունենում է իր ներգործությունը:

## **ԺԿԿ-ի հաղթանակը սպասելի՞ էր Ձեզ համար:**

Սպասելի էր: Թուրք հասարակությունը փոխվելու գործընթացում է: Մի խոսք կա՝ գիշերվա ամենամութ կետը, դա առավոտվա ու արևին ամենամոտ պահն է: Իսկապես գիշերվա ամենամութ կետում էինք և լուսավոր առավոտ մտանք:

*Լուրեր Հայաստանից - NEWS.am*

## **Կարսի ազգայնամոլ քաղաքապետին կատաղեցրել է հայ երաժշտի համերգը Անիում**

24.06.2015

Ներկայում Թուրքիայի տարածքում գտնվող Հայաստանի նախկին մայրաքաղաքներից Կարսի ազգայնամոլ քաղաքապետ Մուրթազա Քարաչանթան չի կարողացել զսպել իր ատելությունը հայերի նկատմամբ եւ հայտարարություն է տարածել Անիի ավերակներում Տիգրան Համայանի համերգի հետ կապված:



Թուրքական Haber46 կայքը ներկայացրել է Կարսի քաղաքապետ, Ազգայնական շարժում կուսակցության անդամ Մուրթազա Քարաչանթայի հայտարարությունը Անիի ավերակներում հայ դաշնակահար Տիգրան Համայանի եւ Երեւանի պետական կամերային նվագախմբի տված համերգի հետ կապված՝ շեշտելով, թե այդ համերգը վառել է իր ներսը մի քանի անգամ ու մի քանի տեղից:

Քաղաքապետը պնդել է, թե ինքը ստիպված է այս անգամ ըմբոստանալ հայերի համերգի դեմ՝ հայտնելով իր անհանդուրժողականությունը հայերի նկատմամբ, ինչպես նաև հետաքրքրվել, թե ինչու էր հայ երաժիշտը Անիում դաշնամուր նվագելու ժամանակ հագնվելու հոգեւորականի նման: Հենց այս հանգամանքն էլ ազգայնամոլ թուրք քաղաքապետին խիստ էր կատաղեցրել:

*Լուրեր Հայաստանից - NEWS.am*

## Անիի Մայր տաճարում աղոթող հայ կնոջը տեսած թուրքը սկսել է բարձրաձայն նամագ անել

24.06.2015



Ներկայում Թուրքիայի տարածքում գտնվող Հայոց նախկին մայրաքաղաք Անիի Մայր տաճարում աղոթող հայ կնոջը տեսած թուրք երիտասարդը սկսել է եկեղեցում բարձրաձայն նամագ անել:

Թուրքական Demokrathaber-ի փոխանցմամբ՝ հայ հայտնի դաշնակահար Տիգրան Համայանի հետ Թուրքիայում համերգային շրջագայության մեկնած Մաթենիկ Վարդանյանը Անիի Մայր տաճարում աղելիս է եղել, երբ եկեղեցի է մտել Ֆաթիհ Ունալ անունով թուրք երիտասարդը:

Թուրք երիտասարդը, տեսնելով աղոթող հայ կնոջը, կանգնել է նրա դիմաց եւ սկսել նամագ անել:

Այն հարցին, թե ինչու թուրք երիտասարդը նման քայլ արեց եկեղեցում աղոթող կնոջ դիմաց, նա պատասխանել է, թե այդ պահին իր սիրտն ուզեց նամագ անել:

*Լուրեր Հայաստանից - NEWS.am*

## Միջուկը

### Հուսանք՝ Թուրքիայի խորհրդարան անցած 3 հայ պատգամավորները կգտնեն ոսկե միջինը. Արա Գոչունյան

08.06.2015



Բավականին հետաքրքրական է հայկական արմատներ ունեցող 3 պատգամավորների առկայությունը Թուրքիայի խորհրդարանում՝ հաշվի առնելով, որ Թուրքիայի հայկական համայնքը ներքաղաքական կյանքում փորձել է միշտ չեզոք եւ անաչառ լինել: NEWS.am-ի թղթակցի հետ զրույցում նման կարծիք հայտնեց Ստամբուլի հայկական «Ժամանակ» թերթի խմբագիր Արա Գոչունյանը՝ անդրադառնալով հունիսի 7-ին տեղի ունեցած խորհրդարանական ընտրություններին:

«Բազում տասնամյակներ անց հայկական արմատներով պատգամավորներ են հայտնվել Թուրքիայի խորհրդարանում: Հետաքրքրական է, որ հենց 3 պատգամավոր միանգամից հայտնվել է խորհրդարանում: Հայկական համայնքը փորձել է միշտ Թուրքիայի ներքաղաքական դասավորումների մեջ չեզոք լինել, անաչառ, բոլորի հետ մնալ հավասար հեռավորության վրա: Իսկ այժմ 3 հայ պատգամավոր 3 տարբեր կուսակցություններից»,- ասաց Արա Գոչունյանը:

Հայկական թերթի գլխավոր խմբագիրը կարծում է, որ հայկական արմատներ ունեցող պատգամավորները կգտնեն ոսկե միջինը եւ կկարողանան դրական ազդեցություն ունենալ Հայկական հարցի լուծման մեջ: Միեւնույն ժամանակ, Գոչունյանը հիշեցրեց, որ Հայկական հարցի լուծումը կուսակցական վերաբերմունքից կախում չունի, այն պետական որոշում է:

Նշենք, որ Թուրքիայում հունիսի 7-ին տեղի ունեցած խորհրդարանական ընտրություններում հաղթել է 3 հայ պատգամավոր՝ իշխող Արդարություն եւ զարգացում (AKP) կուսակցության կողմից ներկայացված Մարգար Եսայանը, ընդդիմադիր Ժողովրդահանրապետական (CHP) կուսակցության կողմից ներկայացված Մելինա Դողանը եւ քրդական Ժողովուրդների դեմոկրատական (HDP) կուսակցության կողմից ներկայացված Գարո Փայլանը:

*Լուրեր Հայաստանից - NEWS.am*

## Թուրքիայում 3 հայ թեկնածուները պատգամավոր են դարձել

08.06.2015



Թուրքիայի Ազգային մեծ ժողովի 25-րդ գումարման ընտրություններում 3 կուսակցությունների կողմից ներկայացված հայ թեկնածուները պատգամավոր են դարձել:

Թուրքական Milliyet-ի փոխանցմամբ՝ իշխող Արդարություն եւ զարգացում (AKP) կուսակցության կողմից ներկայացված Մարգար Եսայանը, ընդդիմադիր Ժողովորդա-հանրապետական (CHP) կուսակցության կողմից ներկայացված Մելինա Դողանը եւ քրդական Ժողովուրդների դեմոկրատական (HDP) կուսակցության կողմից ներկայացված Գարո Փայյանը Թուրքիայի խորհրդարանի պատգամավոր են դարձել: Այսպիսով 54 տարի անց Թուրքիայի խորհրդարանում կրկին հայ պատգամավոր է մտնում:

Նշենք, որ հունիսի 7-ին տեղի ունեցած խորհրդարանական ընտրություններում իշխող կուսակցությունը հավաքել է ընդամենը 40,8 տոկոս, CHP-ն՝ 25, MHP-ն՝ 16,3 եւ քրդական HDP-ն՝ 13,07 տոկոս:

[Լուրեր Հայաստանից - NEWS.am](http://en.amnews.am)

## ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԹԲԻԼԻՍՅԱՆ ԲՆԱԿԱՐԱՆԸ ՓՈԽԱՆՑՎԵՑ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻՆ

Հունիսի 8-ին Թբիլիսի էր ժամանել Հայաստանի գրողների միության նախագահ Էդվարդ Միլիտոնյանը՝ գրողների միության պատվիրակության ուղեկցությամբ: Այցի նպատակը Հովհաննես Թումանյանի թբիլիսյան բնակարանը ամբողջական տեսքով Վիրահայոց թեմին փոխանցելն էր: Այս մասին «Հայերն այսօրին» տեղեկացնում է Վիրահայոց թեմի մամուլ դիվանը:

Հյուրերը «Հայարտուն» կենտրոնում Կոմիտասին նվիրված ցուցահանդեսը դիտելուց հետո, այցելեցին Խոջիվանքի հայ գրողների և հասարակական գործիչների պանթեոն՝ ծաղիկներ խոնարհելու Ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի և ազգի մյուս մեծերի շիրիմներին:

Հայաստանի գրողների միության նախագահը և Վիրահայոց թեմի առաջնորդը, թբիլիսահայ մտավորականության ներկայացուցիչների և առաջնորդարանի պաշտոնեւորության հետ միասին ուղևորվեցին դեպի Հովհաննես Թումանյանի թբիլիսյան բնակարան, որտեղ նրանց միացան Վրաստանում ՀՀ դեսպանության խորհրդակցական Կարեն Մելիքյանը, Վրաստանի գրողների միության քարտուղար Մադվալա Գոնաշվիլին, «Ցիսկարի» ամսագրի խմբագիր, գրող Բադաթեր Արարուլին և այլոք:

Հովհաննես Թումանյանի տան մի մասը, գրադարանի վերածված 150 քառակուսի մետր տարածքը, 2012 թվականին, Հայաստանի գրողների միության երջանկահիշատակ նախագահ Լևոն Ամանյանի անդուլ

ջանքերով ձեռք էր բերվել Գյումրիի նախկին քաղաքապետ Վարդան Դուկասյանի հովանավորությամբ:

Տան ամբողջական տեսքով ձեռք բերման հարցը գտնվում էր ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի ուշադրության ներքո և այդ ուղղությամբ հետևողական աշխատանք էր տանում նաև Վրաստանում ՀՀ դեսպանությունը: Եվ միայն վերջերս՝ 2015 թվականին, Վիրահայոց թեմի առաջնորդի դիմումով, «Սուրբ Գևորգ» եկեղեցու հիմնադրամի միջոցներով գնվեց նաև շենքի ժառանգներին մնացած մասը և նախօրոք ձեռք բերված հատվածի հետ միասին ամբողջական տեսքով նվիրաբերվեց թեմին՝ որպես սեփականություն:

Երկու երկրների գրողների միությունների նախագահների հանդիպումը խորհրդանշորեն տեղի ունեցավ հատկապես այս տանը:

Հայաստանի գրողների միության նախագահ Էդվարդ Միլիտոնյանը հանդիսավորապես Վիրահայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Վազգեն Եպիսկոպոս Միրզախանյանին հանձնեց տան բանալիները: Տունը այսուհետ կոչվելու է «Մշակույթի և արվեստի Թումանյանական Վերնատուն» և նրա գործունեությունը նպատակաուղղված է լինելու երկու քրիստոնյա ազգերի համագործակցության, բարեկամական հարաբերությունների, ստեղծագործական կապերի զարգացմանը և խորացմանը: Իրականացվելու են գրքերի քննարկում-շնորհանդեսներ, հայ և վրաց ստեղծագործական, մշակութային տարբեր միջոցառումներ: Շենքում գործելու է դահլիճ, քառայեզու գրադարան, ՀԲԸՄ Վիրտուալ Համալսարանը, իսկ սենյակներից մեկը կրելու է Լևոն Ամանյանի անունը:

Շնորհավորանքի ելույթներով հանդես եկան Վրաստանի գրողների միության քարտուղար Մադվալա Գոնաշվիլին, Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միության նախագահ Գևորգ Մելիքյանը, Վրաստանում ՀՀ դեսպանության խորհրդակցական Կարեն Մելիքյանը, բանաստեղծ-թարգմանիչ Գիլի Շահնագարը, գրող, թարգմանիչ Անահիտ Բոստանջյանը:

Վիրահայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Վազգեն Եպիսկոպոս Միրզախանյանն իր օրհնության և գնահատանքի խոսքում օրը անվանեց, հիրավի, պատմական, քանզի Ամենայն հայոց բանաստեղծի բնակարանը շուտով կվերադառնա իր նպատակային ծառայությանը և Թեմի անունից ստանձնեց անհրաժեշտ վերանորոգչական աշխատանքների իրականացման, անհրաժեշտ գույքով և կահավորանքով ապահովման պարտավորություն:

Այնուհետև Հայաստանի գրողների միության նախագահ Էդվարդ Միլիտոնյանը և Վրաստանի գրողների միության քարտուղար Մադվալա Գոնաշվիլին, ստորագրեցին համագործակցության մասին հուշագիր, որին միացան Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միությունը, «Հայարտուն» կենտրոնը, Հայ-վրացական մշակութային կապերի «Կամուրջ» հասարակական կազմակերպությունը:

Հ.Գ. Հայ մեծ գրող Հովհաննես Թումանյանի Թբիլիսիի տունը գտնվում է Ամաղեբա (նախկին՝ Դավիթաշվիլի) փողոցի 18 հասցեում, որում ապրել է Թումանյանը 1909-1923 թթ-ը, իսկ 1952 թ-ին տան իրերը տեղափոխվել են Երևան: 6 սենյակներից 4-ը վերածվել էին գրադարանի, իսկ մյուս 2-ը՝ մնացել գրողի ժառանգներին: Անկախացումից հետո Թբիլիսիի քաղաքապետարանը որոշ հանգամանքների բերումով գրադարանային մասը փոխանցել էր Վրաստանի մի քաղաքացու, ումից և հարկ եղավ ձեռք բերել այն:

<http://hayernaysor.am>

**Ստամբուլահայ կին պատգամավորը հայտնել է, թե ինչ օրինագիծ է ցանկանում մշակել**

12.06.2015



Թուրքիայի խորհրդարանական ընտրությունների արդյունքում «Ժողովրդա-հանրապետական» (CHP) կուսակցության կողմից պատգամավոր դարձած հայուհի Մելինա Օզուզուն Դոդանը հարցազրույց է տվել Ստամբուլի հայկական «Ակոս»-ին:

Մելինա Դոդանը, անդրադառնալով ընտրությունների արդյունքին, նշել է, թե ինքը միշտ շեշտել է, որ արդեն անցել է «Արդարություն եւ զարգացում» կուսակցության դարաշրջանը եւ դրա պատասխանը ամենալավ տվեցին քվեատուփերը: Նա շեշտել է, թե ներկա պահին ամենակարևոր քաղաքական դերակատարումն ունի CHP-ն՝ հիշեցնելով, որ կուսակցության ղեկավարությունը գոհ է արդյունքներից:

Հայ կին պատգամավորը նշել է, թե ցանկանում է աշխատել ատելության սերմանման եւ խտրականության դեմ պայքարի օրինագծի վրա՝ ընդգծելով, որ կուսակցության որոշմամբ էլ կկատարի տարբեր պարտականություններ: «Մակայն արդարադատության, Սահմանադրության եւ մարդու իրավունքների հանձնաժողովներում եմ ուզում ընդգրկվել» ամփոփել է Մելինա Դոդանը:

Նշենք, որ հայուհին ծնվել է 1977-ին, Ստամբուլում: Ամուսնացած է, ունի երկու երեխա: Աշխատում է փաստաբանական գրասենյակում: Հայերենից եւ թուրքերենից բացի տիրապետում է նաեւ անգլերենին եւ ֆրանսերենին:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

**Մահացել է Քրրք Քրրքոյանը**

16.06.2015

Երկուշաբթի երեկոյան մահացել է ամերիկահայ գործարար, բարերար, Հայաստանի ազգային հերոս Քրրք Քրրքոյանը: Այս մասին հաղորդում է USA Today-ը՝ հղում անելով MGM Resorts International-ին:

Լաս Վեգասի հսկան, որը մեծ դեր է խաղացել խաղատների քաղաքի կայացման գործում եւ տարիներ շարունակ ֆինանսական մեծ օգնություն է ցուցաբերել Հայաստանին, 98 տարեկան էր:

«Նա մեծ մարդ էր, հրաշալի բիզնեսմեն, նորարար, մեր ժամանակների ամենահեղինակավոր եւ ազդեցիկ ֆինանսիստներից մեկը»,- իր հայտարարությունում ասել է MGM Resorts International-ի գլխավոր գործադիր տնօրեն Ջիմ Մյուրենը:

Քրրք Քրրքոյանը (Գրիգորյան Գրիգոր Ահարոնի) ծնվել է 1917 թ. 19-րդ դարի վերջին Խարբերդից Ֆրեզնո գաղթած Ահարոն Գրիգորյանի ընտանիքում: Մինչև 1935-ը կատարել

է զանազան աշխատանքներ, եղել է պրոֆեսիոնալ բռնցքամարտիկ: Այնուհետև սովորել է օդաչուական դպրոցում, դարձել օդաչու-հրահանգիչ: Լեզենդար բիզնեսմենը «Ֆորբսի» գնահատականով աշխարհի 393-րդ ամենահարուստ մարդն էր, որի կարողությունը գնահատվում է 4 մլրդ դոլար:



Որպես ռազմաօդային ուժերի օդաչու մասնակցել է Երկրորդ համաշխարհային պատերազմին, որի ավարտից հետո զբաղվել է օդանավերի բաժնեթղթերի առևտրով (1947-ին գնել է Los Angeles Air Service փոքրիկ չարտերային ավիաընկերությունը), ինչպես նաև հյուրանոցային բիզնեսով: Կառուցել է Լաս Վեգասի «Ֆլամենգո», «Էմ Ջի Գրանդ» և այլ խոշոր հյուրանոցներ: 1968-ից զբաղվել է կինոարտադրությամբ, «Մետրո Գոլդվին Մայեր» և «Յունայթեդ Արտիստս» կինոստուդիաների, «Էմ Ջի Էմ Միրած» կորպորացիայի հիմնադիր բաժնետերն է: Եղել է «Քրայսլեր Քորպորեյշնի» բաժնետեր:

Սպիտակի երկրաշարժից հետո և շրջափակման տարիներին Քրրքոյանը մեծապես օգնել է Հայաստանին ու Արցախին: Նրա հիմնադրած «Լինսի» հիմնադրամը 2001-ից ի վեր 151 միլիոն դոլար է տրամադրել Հայաստանին՝ ճանապարհների վերակառուցման, մշակութային հաստատությունների վերանորոգման, աղետի գոտու բնակարանաշինարարության, եւ 21 միլիոն դոլար՝ Հայաստանում փոքր և միջին ձեռներեցության զարգացման համար:

2004թ. հայրենիքին մատուցած բացառիկ ծառայությունների համար նրան շնորհվել է Հայաստանի Հանրապետության բարձրագույն՝ Հայաստանի ազգային հերոսի կոչում:

1943 թ. Քրրքոյանն ամուսնացել է մասնագիտությամբ ատամնաբույժ Հիլդա Մմիթի հետ, ապա բաժանվել 9 տարի անց: 1955թ. ամուսնացել է նախկին պարուհի Ջին Մարի Հարդիի հետ: Այդ ամուսնությունից Քրրքոյանն ունեցել է մեկ դուստր՝ Թրեյսիին, և որդեգրել ևս մեկին՝ Լինդային: 29 տարի անց Քրրքոյանը կրկին ամուսնալուծվել է:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

**Հարյուրավոր փրկված կյանքեր. Քրրք Քրրքոյանի իրական ժառանգությունը**

17.06.2015

Մեծագույն հայ մարդասեր, առավել հայտնի հայ գործարար ու Լաս Վեգասի թագավոր Քրրք Քրրքոյանը մահացել է հունիսի 15-ին Լոս Անջելեսում, 98 տարեկան հասակում, բնական պատճառներով: Այս մասին Վաշինգթոնում NEWS.am-ի թղթակցի հետ զրույցում նշել է գործարարի մամուլի քարտուղար Թոմ Ջոնսոնը:

Ամերիկայի հայկական համագումարի գործադիր տնօրեն Բրայան Արդունու խոսքով, Քրքրոյանի բարեգործությունը չէր սահմանափակվում մեկ ծրագրով, ոչ էլ նույնիսկ մեկ երկրով: Նա իսկապես համաշխարհային մակարդակի մարդ էր, որի կյանքի ուղին ոգեշնչել է հայերի շատ սերունդներին: «Հայկական սիյուռը երկրագնդի բոլոր անկյուններում օգտվել է Քրքր Քրքրոյանի աջակցությունից, եւ այսօր մենք բոլորս սգում ենք մեծ մարդու կորուստը»,-ասել է Արդունին:

Իր կողմից, Ամերիկայի Հայ դատի հանձնախմբի գործադիր տնօրեն Արամ Համբարյանը նույնպես ընդգծել է Քրքր Քրքրոյանի բացառիկ դերը հայկական սիյուռքի պահպանման գործում:

«Նրա աջակցությունը կարևորագույն դեր է խաղացել հայ համայնքների պահպանման գործում ոչ միայն ԱՄՆ-ում, այլև Մերձավոր Արևելքում եւ ողջ աշխարհում»,-նշել է Համբարյանը: Նա հիշեցրել է, որ 1989 թվականից Քրքրոյանը ստեղծել է Լինսի հիմնադրամը՝ օգնելու համար Մայիտակի երկրաշարժի զոհերին, իսկ ավելի ուշ՝ շրջափակման մեջ գտնվող Հայաստանին: Հարյուրավոր կյանքեր են փրկվել Քրքր Քրքրոյանի շնորհիվ, որը մատակարարում էր այդքան անհրաժեշտ դեղորայքն ու բժշկական օգնությունը:

«Հայկական դպրոցների վերականգնում, ճանապարհների, մշակույթի օջախների կառուցում, աջակցություն կրթական ծրագրերի զարգացմանը, այս ամենն է հենց Քրքր Քրքրոյանի իրական ժառանգությունը, որով իրավունք ունենք հպարտանալու մենք բոլորս»,-ընդգծել է Համբարյանը:

*Լուրեր Հայաստանից - NEWS.am*

## Մեր նպատակն է Միսի կաթողիկոսարանում պատարագ անցկացնելը. Արամ Ա

20.06.2015



Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության պահանջը Թուրքիայի Սահմանադրական դատարանից հստակ է՝ վերադարձնել Միսի պատմական կաթողիկոսարանը: Այս մասին հունիսի 19-ին Փարիզում հայտարարել է Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսը՝ նշելով, որ դատավարական ընթացքին առնչվող մոտեցումները պետք չէ շփոթել դատի բուն նպատակի հետ:

Արամ Առաջինի խոսքով՝ իրենց նպատակն է նաև կաթողիկոսարանում կրոնական արարողություններ կատարելը:

«Մովորական դատ չէ մեր դատը եւ ոչ էլ հողը վերադարձնելու համար է: Մենք ցանկացել ենք պարզապես այս հայքը դարձնել մեր եկեղեցապատկան եւ ազգապատկան կալվածքների պահանջի սկզբնակետը:

Հավատում ենք, որ իրավական այս քայլը նոր ուժ կա մեր պահանջատիրությանը»,- ասել է Վեհափառ Հայրապետը: Հիշեցնենք, որ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունն ապրիլի 28-ին դիմել է Թուրքիայի Սահմանադրական դատարան՝ պահանջելով հետ վերադարձնել Միսի կաթողիկոսական նստավայրն ու կալվածքը, որը գտնվում է պատմական Կիլիկիայի հայկական թագավորության տարածքում:

*Լուրեր Հայաստանից - NEWS.am*

## Միջազգային

### Բելգիայում կատարեցին խոստումը. Ցեղասպանության ժխտման համար հեռացրեցին

29.05.2015



Բելգիայի խորհրդարանի Քրիստոնեա-դեմոկրատական կուսակցությունը Հայոց ցեղասպանության ժխտման համար իր շարքերից հեռացրել է թուրքական ծագմամբ պատգամավոր Մահինուր Էզդեմիրին: Այս մասին հաղորդում է բելգիական Knack պարբերականը:

«Տիկին Էզդեմիրը հրաժարվում է ճանաչել Հայոց ցեղասպանությունը, ինչը դեմ է մեր արժեքներին: Այստեղ խուսափողական դիրքորոշումն անհնար է. առավելագույն հստակություն է անհրաժեշտ»,- ասված է կուսակցության հայտարարությունում:

Ավելի վաղ կուսակցության նախագահ Բենուա Լյուտգենը հայտարարել էր, որ եթե կուսակցությունում ցեղասպանությունը ժխտողներ լինեն, նրան անմիջապես կհեռացնեն:

Հայոց ցեղասպանության ճանաչումը Քրիստոնեա-դեմոկրատական կուսակցության արժեհամակարգի կարևորագույն սկզբունքներից է համարվում:

*Լուրեր Հայաստանից - NEWS.am*

### Հայատյաց Դոդու Փերինչեքի կուսակցությունը հավաքել է 0,35 ձայն

14:23, 08.06.2015

Թուրքիայի Ազգային մեծ ժողովի 25-րդ գումարման ընտրություններում Դոդու Փերինչեքի գլխավորած «Հայրենիք» (Vatan) կուսակցությունը խիստ քիչ ձայներ է ստացել:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանում «Փերինչեքն ընդդեմ Շվեյցիբայի» գործով Թուրքիայում «հերոսի» կոչում վաստակած հակահայ գործիչ Դոդու

Փերինչեքի գլխավորած «Հայրենիք» կուսակցությունը հունիսի 7-ի խորհրդարանական ընտրություններում հավաքել է 0,35 տոկոս ձայն:



Նշենք, որ հունիսի 7-ին Թուրքիայում տեղի ունեցած խորհրդարանական ընտրություններում իշխող «Արդարություն եւ զարգացում» կուսակցությունը հավաքել է ընդամենը 40,8 տոկոս, ընդդիմադիր «Ժողովրդահանրապետական» (CHP) կուսակցությունը՝ 25 տոկոս, Ազգայնական շարժումը (MHP)՝ 16,3 տոկոս եւ քրդական «Ժողովուրդների դեմոկրատական» կուսակցությունը (HDP)՝ 13,1 տոկոս:


Լուրեր Հայաստանից - NEWS.am

## Հասարակական

Դր. Էդիկ Բաղդասարյան

### ՀԱՅՎԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՆԻՖԵՍՏ

(Ծրագրային Չայտարարություն՝ Առաջարկ)  
2014 Տորոնտո – Կանադա  
ISBN: 978-1-927860-27-4



Սկիզբը նախորդ համարից

### Բ-2- Արտաքին քաղաքականություն

1. Պարզաբանել Հայկական Հարցի վերաբերյալ օտար պետությունների քողազերծված քաղաքականությունը մանավանդ 17-րդ դարից հետո մինչ այժմ, որի արդյունքում կհանաչվեն մեր ազգի ու պետության իրական բարեկամներն ու թշնամիները, եւ այդ երկու սահմանում մի միջեւ ընկնող մյուսները:
2. Սահմանափակել դիվանագիտական եւ այլ հարաբերությունները թշնամի եւ ոչ-բարեկամ պետությունների հետ, եւ զարգացնել նյունը բարեկամ երկրների հետ:
3. Ըստ հին եւ ժամանակակից պատմության փաստերի ու ընդհանուր ընթացքի, ԱՄՆ, Մեծն Բրիտանիան, Ֆրանսիան, Գերմանիան չեն հանդիսանում Հայոց բարեկամներ

